338.14
4-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐՏԵԼԻ
(ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ)

„ՀԱՅԳՈՒՂԿՈՊ"-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ № 5

ՅԵՐԵՎԱՆ—1927 Թ.

17 MAY 2013

30578

338.14

4-21

05 JAN 2010

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/31. 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

.....

ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ .....

Արտելի նպատակը, իրավունքները ու պարտականութիւնները։

§ 1.

Սույն կանոնադրության հիման վրա գործում է աշխատավորական հողագործական արտելը .....

.....

.....

անվան տակ։

§ 2.

Արտելը իր յերկրագործական տնտեսությունը վարում է ..... գավառի ..... գավառակի ..... գյուղում։

Արտելի վարչությունը գտնվում է .....

գավառի .....

գավառակի ..... գյուղում։

§ 3.

Արտելը նպատակ ունի բարձրացնելու իր անդամների տնտեսական վիճակը, կազմակերպելով ընկերական հիմունքների վրա, նրանց աշխատանքները յերկրագործական արտեսությունում միասեղ, արտադրելու գյուղատնտեսական մթերքներ:

§ 4.

3-րդ կետում նշված նպատակներին հասնելու համար արտելին իրավունք և վերապահվում՝

ա) Ստանալ հողային որենսդրքով նախատեսված (հատկացման կարգով) առանձին հողամասեր աշխատավորական ընկերական ոգտագործության համար:

բ) Հողային որենսդրքով նախատեսված կարգով, միասեղ կենտրոնացնել արտելի անդամների ոգտագործման ներքո անցած հողամասերը:

գ) Ստանալ հողամասեր կապալով ոգտագործելու համար:

դ) Կառուցել արտելի ոգտագործման համար, ինչպես անդամներից ստացած հողաբաժինների միջոցով, նույնպես կապալով ոգտագործման համար վերցրած հողամասերի վրա մեկ հողային ընդհանուր տնտեսություն, որտեղ արտելի անդամները և նրանց ընտանիքները աշխատում են միասեղ, յենթարկվելով արտելի ընդհանուր ղեկավարությանը:

յե) Ձեռք բերել արտելի անդամներից և կողմնակի անձնավորություններից, որպես սեփականություն և ժամանակավոր ոգտագործման համար, բանվոր անասուններ գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, ամեն տեսակի նյութեր և այլ կայք, որոնք անհրաժեշտ են գյուղացու տնտեսությունը տանելու համար:

զ) Կառուցել արհեստանոցներ, շենքեր և սարքավորումներ, գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար (ջրաղացներ, չորանոցներ, պանրագործարաններ, յուղագործարաններ, ոսլայի գործարաններ և այլն) նմանապես արհեստանոցներ գյուղատնտեսական մեքենաների և գործիքների պատրաստման և վերանորոգման համար:

է) Գյուղատնտեսական աշխատանքից դուրս, ազատ ժամերին, կազմակերպել արտել սկզբունքներով, իր անդամների համար ոժանդակ արհեստավորական զբաղմունքներ:

ը) Կազմակերպել արտելի տնտեսության և առանձին անդամների տնտեսությունների մթերքների վաճառահանման գործը, նույնպես և մատակարարել արտելի անդամներին ամեն տեսակի պարագաներ՝ իրենց տնտեսությունը վարելու և այդ նպատակի համար բացել պահեստներ և խանութներ:

թ) Կազմակերպել փորձնական և ցուցադրական դաշտեր, բանջարանոցներ, այգիներ, ֆերմաներ, ագարակներ, նույնպես սերմնա—և ցեղային բուծարաններ, տնկարաններ, կազմակերպել վարձու, սերմազտիչ, տեսակավորման, վերահսկիչ և բեղմնավորման կայաններ:

ժ) Կազմակերպել իր անդամների համար, հանրակացարաններ, ճաշարաններ, մանկական մսուրներ, բաղնիքներ և այլն:

ի) Հրավիրել ամեն ճյուղի մասնագետներ՝ վարելու ինչպես արտելի տնտեսությունը, նույնպես և տալու արտելի առանձին անդամներին անհրաժեշտ խորհուրդներ:

լ) Կազմակերպել կառուցումներ՝ դաշտերը վոռոգելու և չորացնելու համար, նմանապես ոգտագործելու ելեքտրականությունը, գյուղային տնտեսության ու տնային տնտեսության մեջ:

թ) Տարածել գյուղատնտեսական և կոոպերատիվ գիտելիքներ, վորի համար կազմակերպել ընթերցարաններ, գրադարաններ, դասընթացքներ, դասախոսություններ և այլ ոգտակար հիմնարկ-ձեռնարկներ արտելի համար:

ժ) Ցույց տալ իր անդամներին աջակցություն, աշխատավորական տնտեսությունը վարելու գործում, յեթե նրանք բացի արտելի տնտեսությունում մասնակցություն ունենալուց, ունեն նաև առանձին տնտեսություն:

կ) Ընդհանրապես ձեռք առնել բոլոր տեսակի միջոցները, ամենահաջող ձևով հասնելու արտելի նպատակներին:

§ 5·

Արտելը իրավունք ունի բոլոր իրավական միջոցներով ձեռք բերել և ստանալ կայք, կնքել պայմանագրեր, տալ և ստանալ մուրհակներ և այլ տեսակի պարտավորագրեր, հարուցել հայցեր և պատասխանել դատարաններում, ընդհանրապես ոգտվել իրական անձի բոլոր իրավունքներով:

§ 6·

Իր պարտավորությունների հանդեպ, արտելը պատասխանատու յե իր ամբողջ ունեցվածքով: Բացի դրանից արտելի պարտքերի չիջեցումը ապահովում է անդամների ունեցվածքային պատասխանատվությամբ (հոդ. 17-րդ):

§ 7·

Արտելը իրավունք ունի ընդհանուր ժողովի վորոշմամբ, անդամագրվել կոոպերատիվ միություններին, ընկերություններին և համայնքներին, վորոնք կարող են ոժանդակել իրեն նպատակին հասնելու համար:

§ 8·

Արտելը ունենում է իր անվանական կնիքը:

ԱՐՏԵԼԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ

§ 9·

Արտելի անդամներ կարող են լինել 18 տարեկան հասակը լրացած յերկսեռ քաղաքացիները, վորոնք իրենց աշխատանքով գյուղատնտեսությամբ են զբաղվում:

§ 10·

Արտելի մեջ անդամի ընդունելությունը կատարում է ընդհանուր ժողովը, ըստ վորում նախքան ընդունելությունը կարող են նշանակել վորոշ ժամանակ փորձության համար, վորի ընթացքում թեկնածու անդամը աշխատում է արտելում մյուս անդամների հետ, ընդհանուր հիմունքներով, սակայն անդամների ընդհանուր ժողովում չի ունենում վճռական ձայնի իրավունք:

§ 11·

Այն անձնավորությունը, վոր ցանկանում է ընդունվել արտելի մեջ, տալիս է արտելի վարչությանը դիմում, վորի մեջ բացի միջնորդություն հարուցելուց, հայտարարում է, վոր նա պարտավորվում է յենթարկվել սույն կանոնադրության բոլոր վորոշումներին, ընդհանուր ժողովի սահմանած կանոններին, նույնպես իր վրա յե վերցնում պատասխանատվություն, արտելի պարտավորությունների հանդեպ՝ համաձայն սույն կանոնադրության 17-րդ հոդվածի:

§ 12·

Արտելի յուրաքանչյուր անդամը իրավունք ունի՝

ա) Մասնակցել արտելի բոլոր գործերին, ոգտվելով անդամների ընդհանուր ժողովում վճռական ձայնի իրավունքով:

բ) Ներկայացնել վարչության, վերստուգիչ հանձնաժողովին և ընդհանուր ժողովին արտելի գործերով ամեն տեսակի դիմումներ:

գ) Արտելի աշխատանքներից ազատ ժամանակ կարող է զբաղվել իր տնտեսությամբ, ոգտվելով արտելի աջակցությամբ:

դ) Ստանալ արտելի կողմից սահմանած հիմունքներով, իր աշխատանքների համար վարձատրություն:

§ 13·

Արտելի յուրաքանչյուր անդամ պարտավոր է՝

ա) Արտելը ընդունվելու ժամանակ մուծել անվերադարձ մուտքի վճար (հոդ· 27) և ընդհանուր ժողովի կողմից վորոշած փայ (հոդ· 24):

բ) Ցենթարկվել կանոնադրության, ընդհանուր ժողովի վորոշումներին և առհասարակ արտելի բոլոր որինական պահանջներին:

գ) Կրել պատասխանատվություն արտելի գործերով համաձայն սույն կանոնադրության 17-րդ հոդվածի:

դ) Իր անհատական աշխատանքով մասնակցություն ունենալ արտելի գործերում—նրա ղեկավարությամբ:

§ 14·

Յուրաքանչյուր անդամ կարող է հեռանալ արտելից, տալով այդ մասին վարչությանը գրավոր հայտարարություն: Հեռացման որը հաշվվում է հաշվետու տարվա վերջին որը, յեթե հեռանալու մասին հայտարարությունը տված է վոչ պակաս, քան յերեք ամիս առաջ, մինչև նույն տարվա վերջը, հակառակ պարագային դուրս գալու որը հաշվվում է հետևյալ հաշվետու տարվա վերջին որը:

Արտելից հեռացած անդամը կարող է նորից վերընդունվել:

Արտելի անդամը վորը հայտարարում է արտելից իր հեռանալու մասին, ազատվում է արտելի տնտեսությունում աշխատելու պարտականությունից, առնվազն մի ամսից հետո, հաշված հեռանալու մասին տրված դիմումի որից: Այդ ժամանակից էլ արտելի պահանջմամբ նա պարտավոր է թողնել արտելի ագարակը, յեթե նա ապրում է այնտեղ:

§ 15·

Արտելի մահացած անդամը համարվում է դուրս յեկած արտելից հաշվետու տարվա վերջին որը, վորի ժամանակաընթացքում նա մահացել է· մինչև այդ որը մահացածի ունեցվածքային իրավունքները անցնում են նրա իրավահաջորդներին: Սակայն մահացածի իրավունքները՝ ընդհանուր ժողովին մասնակցելու և զանազան պաշտոններ տանելու նկատմամբ արտելի մեջ, իրավահաջորդներին չի անցնում:

§ 16·

Ընդհանուր ժողովի վորոշմամբ արտելից կարող են հեռացվել այն անդամները, վորոնք չեն կատարում իրենց պարտականությունները արտելի հանդեպ, կամ գործել են ի վնաս նորան: Հեռացման որը համարվում է հաշվետու տարվա վերջին որը, վորի ընթացքում կատարվել է հեռացումը, սակայն ընդհանուր ժողովում մասնակցել, արտելում ունենալ պաշտոններ և ոգտվել արտելի աջակցությամբ, հեռացվածը իրավունք չունի, սկսած այն ժամանակից, յերբ ստացել է ծանուցում հեռանալու մասին: Արտելից հեռացվածը կարող է վերստին ընդունվել վորպես անդամ, միմիայն ընդհանուր ժողովի վորոշմամբ:

Արտելից հեռացված անդամը արտելի տնտեսությու-

նում աշխատելու իրավունքը կորցնում է, յերկու շաբաթից հետո հաշված այն որից, յերբ ընդհանուր ժողովը վորոշում է կայացրել նրան հեռացնելու մասին և այդ ժամանակվանից վոչ ուշ նա պետք է հեռանա արտելի տնտեսությունից, յեթե նա ապրում է այնտեղ:

§ 17.

Արտելի յուրաքանչյուր անդամը մյուս մնացածների հետ կրում է լրացուցիչ ունեցվածքային պատասխանատվություն արտելի պարտավորությունների հանդեպ փոխադարձ յերաշխավորությամբ, համաձայն 46 և 97 հոդվածների: Սակայն այդ պարտավորությունը չպետք է դերադանցի յուրաքանչյուր դեպքում փայերի . . . . . պատիկ գումարից:

§ 18.

Արտելի նոր ընդունված անդամները պատասխանատու յեն նաև այն պարտավորությունների համար, վորոնք առաջացել են նախ քան նրա ընդունվելը:

§ 19.

Արտելից հեռացվածները, կամ նրանց իրավահաջորդները 1-ի տարվա ընթացքում՝ հաշված դուրս յեկած որից, պատասխանատու են արտելի պարտքերի հանդեպ, վորոնք առաջացել են նախ քան նրա հեռանալը:

§ 20.

Արտելից հեռացված կամ մահացած անդամների իրավահաջորդներին տրվում է նրա տարած աշխատանքի վարձատրությունը:

Փայը, վորը մուծել է հեռացված անդամը վերադարձվում է նրան ընդհանուր ժողովի կողմից նույն գործառնական տարվա հաշվետվությունը հաստատելուց հետո, յերեք ամիս հետո: Փայերը վերադարձվում են, նրան հասանելիք ոգուտի հետ միասին, կամ դուրս են գալիս փայից հեռացվածին բաժին ընկած վնասը:

Փայավճարը, վորը անդամը մուծել է բնականով, վերադարձնում է արտելը ըստ իր հայեցողության. բնականով կամ գնահատությամբ—դրամով, համաձայն 24-րդ հոդվածի, ըստ վորում յեթե վերադարձվելիք կայքի արժեքը նրա գործածության հետևանքով իջել է քան սկզբնական գնահատությունները՝ տարբերությունը տրվում է դրամով: Այն հողամասը, վոր ընդունված եր անդամից արտելի ոգուտագործության համար, հեռացվածին վերադարձվում է հիմնադիրների կողմից սահմանած կարգով (հողային որենսդրքի 107, 108 և 110 հոդվածներով) և ընդհանուր ժողովի կողմից հաստատված հատուկ հրահանգով:

Մնացած բոլոր կայքը, վորը անդամի կողմից տրված է յեղել արտելին ժամանակավոր ոգուտագործման համար պայմանավորված հիմունքներով, այդպիսին վերադարձվում է հեռացված անդամին, կամ նրա հաջորդներին համաձայն պայմանագրի: Բացի վերոհիշյալ կայքի և փայավճարներից, հեռացված անդամները իրավունք չունեն ստանալու վորևե մաս, արտելի այլ ունեցվածքի և դրամագլուխներից:

§ 21.

Արտելի փակման դեպքում, մինչև անդամների պատասխանատվության ժամկետի լրանալը (հոդ. 19-րդ), արտելից հեռացվածները կամ նրանց հաջորդները իրավունք ունեն ունեցվածքի վրա և արտելի պարտքերի հանդեպ մյուս անդամների հետ պետք է կրեն համահավասար պատասխանատվություն:

§ 22·

Արտելը ունենում է հիմնական և պահեստի դրամագլուխներ, և բացի դրանից ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող են կազմվել նաև հատուկ դրամագլուխներ:

§ 23·

Հիմնական դրամագլուխը գոյանում է արտելի անդամների փայերի գումարներից, նվիրատվություններից կամ հիմնական դրամագլուխը ուժեղացնելու համար, ստացած փոխառություններից և զուտ վաստակից հանած հատկացումներից:

Հիմնական դրամագլուխը հատկացվում է արտելի չբաջանառության համար:

§ 24·

Փայը սահմանվում է . . . . . ռուբլի և մուծվում է լիովին արտելի մեջ ընդունվելու ժամանակ, կամ ժամկետներով համաձայն ընդհանուր ժողովի կողմից սահմանած կանոնների:

Փայերի ինչպես և արտելի մյուս դրամագլուխների կայքի վրա չեն կարող դրվել արգելանքներ՝ արտելի առանձին անդամների պարտքերի համար նաև կատարել անվիճելի վարչական պահանջներ:

Փայը չի կարող տրվել ուրիշ անձնավորության

Փայը կարելի է մուծել վոչ միայն դրամով, այլ և զանազան ինվենտարով և կայքով-արտելի համաձայնությամբ: Մուծած կայքը գնահատվում է վարչության և կայքը տվող անդամի համաձայնությամբ: Կայացած համաձայնությունը յենթակա է ընդհանուր ժողովի հաստատման:

Հողի ոգտագործման իրավունքը, յեթե այն տրվում է արտելին յենթակա չե գնահատման և հաշվելու է վորպես փայ:

§ 25·

Հիմնական դրամագլխի համար փոխառության կնքումը կատարվում է միմիայն պայմանագրով, վորով պետք է նախատեսված լինի թե վերցրած գումարը, արտելի փակման դեպքում վերադարձվում է պարտատիրոջը արտելի մյուս բոլոր պարտքերը վճարելուց հետո, բացառությամբ փայի դրամագլխի վճարներից:

§ 26·

Պահեստի դրամագլուխը գոյանում է արտելի մուտքի վճարներից, զուտ վաստակի մասնատրումից և ընդհանուր ժողովի վորոշմամբ, նույնպես արտելի տրամադրության տակ գտնված ուրիշ գումարներից: Պահեստի դրամագլուխը ծառայում է արտելի կրած վնասները ծածկելու համար:

§ 27·

Մուտքի վճարը սահմանվում է . . . . . ռուբլի:

§ 28·

Մինչև վոր պահեստի դրամագլուխը չի հասնի հիմնական դրամագլխի կիսի չափին, նրան է հատկացվում ամեն տարի ամբողջ վաստակի վոչ պակաս մեկ քառորդ ($^1/_4$) մասը:

§ 29·

Հատուկ դրամագլուխներ կազմելու դեպքում, ընդհանուր ժողովը առանձին առանձին պիտի սահմանի, նրանց նպատակը, ինչ ձևով են նոքա գոյանում և ինչ կարգով են նրանք ծախսվում:

Հատուկ դրամագլուխներ կարող են կազմվել՝ ա) արտելի ընդհանուր ժողովի անդամների քանակի $^3/_4$-ի վորոշ-

մամբ, անդամների մուտքի վճարներից, բ) նվիրատվություններից, գ) համաձայն ընդհանուր ժողովի վորոշմամբ ղուտ վաստակի մասնատրումներից, դ) հատուկ փոխառություններից և յե) այլ միջոցներից։

Հատուկ դրամագլուխները կարող են ոգտագործվել կամ վորևե տնտեսական կարիքների համար ինչպես որինակ՝ ջրաղացների, արհեստանոցների, փորձնական ցուցադրական դաշտերի, գրադարանների, դպրոցների կառուցումների և այլն, կամ փոխադարձ ոգնության նպատակներով՝ ինչպես որինակ արտելի անդամներին վորպես նպաստ տալու՝ հիվանդության, հաշմանդամության և այլ նման դեպքերում կամ թե վորևե տան կառուցման, կայք ձեռք բերելու և այդպիսին բարելավելու համար։

Հատուկ դրամգլխի ծախսելու կարգը վորոշում է ընդհանուր ժողովը։

§ 30·

Արտելը իր միջոցները ուժեղացնելու համար, կարող է վարկավորվել և փոխառություն վերցնել վորոշ պայմաններով, վորոնք սահմանվում են ընդհանուր ժողովի կողմից։

Բացի դրանից, արտելը կարող է ընդունել իր անդամներից ավանդներ վորոշ ժամկետներով և ըստ պահանջման, ինչպես դրամական գումարներով նույնպես և ուրիշ իրեղեններով (գնահատությամբ)։ Այդպիսի առարկաների ընդունման պայմանները սահմանում է ընդհանուր ժողովը։

ԱՐՏԵԼԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ·

§ 31·

Արտելի տնտեսությունը տարվում է նախապես կազմած և ընդհանուր ժողովի կողմից հաստատված ծրագրով։

§ 32·

Յուրաքանչյուր բանվորական սեզոնի սկզբին, ընդհանուր ժողովը մշակում է հատուկ հրահանգներ, վորոնք վորոշում են արտելային աշխատանքների մանրամասն կանոնները, աշխատանքի հաշվեառումը, նրա գնահատումը և այլն։

§ 33·

Արտելային հողի մշակումը կատարվում է ինչպես արտելին պատկանյալ ինվենտարով (կենդանի և մեռյալ), նույնպես և արտելի անհատ անդամներին պատկանյալ ինվենտարով (կենդանի և մեռյալ), արտելի անհատ անդամներին պատկանյալ ինվենտարի տիրոջ համաձայնությամբ։

§ 34·

Ամեն տեսակի կայք, այն է՝ բանվոր անասուններ, գյուղատնտեսական մեքենաներ և այլն, վորոնք տրվում են մասնակցողների կողմից արտելին՝ ժամանակավոր ոգտագործության համար, այդպիսի ընդունվում են հատուկ համաձայնագրով, վորի մեջ ըստ ընդհանուր ժողովի կողմից հաստատված վորոշումների, պետք է սահմանվեն կայքի գնահատումը, ժամկետը, գիշերային աշխատավարձը, նույնպես այլ պայմանները, վորոնք կողմերը անհրաժեշտ կհամարեն մտցնել համաձայնագրի մեջ։ Վերոհիշյալ համաձայնագիրը վարչության կողմից գրի յե առնվում հատուկ գրքի մեջ։ Մասնակցողը կարող է պահանջել, վոր վերոհիշյալ գրանցման պատճենը տրվի իրեն։

§ 35·

Եթե սույն կանոնադրության 20, 24 և 34 հոդվածներում կայքի գնահատումը չի կայանա արտելի վարչության և անդամի միջև, այն դեպքում գնահատումը պետք է կա-

տարվի հատուկ հանձնաժողովի կողմից, վորի վորոշումը պարտավորեցուցիչ է թե անդամի և թե արտելի համար։ Վերոհիշյալ հանձնաժողովը կազմվում է՝ ա) մեկ անձից, վորը ցույց կտա արտելի անդամը, վորի հետ պետք է կայանա համաձայնությունը, ըստ վորում այդ անձը ազդակցական կապեր չպետք է ունենա նրա հետ. բ) մեկ անձից ըստ արտելի վարչության ցուցմունքի, վորը չի պատկանում արտելի վարչության կազմին և գ) 3-րդ անձից, ըստ յերկուկողմերի ընտրության, վորը հանդիսանում է նշած հանձնաժողովի նախագահը։

§ 36.

Արտելի յուրաքանչյուր անդամ պարտավոր է մասնակցել ընդհանուր աշխատանքներին իր անձնական աշխատանքով։ Արտելի աշխատանքներին ներգրավվում են նաև արտելին մասնակցողների ընտանիքների անդամները։ Առաջին հերթին աշխատանքներին ներգրավվում են արտելի անդամները, 2-րդ հերթին նրանց ընտանիքները։ Վարձու աշխատանք թույլատրվում է միայն՝ 1) կատարելու այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք պահանջում են հատուկ գիտելիքներ և ընդունակություն. 2) ինչպես ժամանակավոր միջոց աշխատավորների հիվանդության հետևանքով, վորոնք արտելի կազմին են պատկանում, կամ այն դեպքում յերբ գյուղատնտեսության պայմաններում պահանջվում է վորոշ աշխատավոր ձեռքերի հավելում, սակայն վարձու աշխատանքի քանակը ըստ աշխատանքի օրերի չպետք է գերազանցի արտելին մասնակցող բանվորական օրերի 20%-ից։

§ 37.

Այն դեպքում, յեթե արտելի անդամը հիվանդության կամ ուրիշ չնախատեսված պատճառներով—ժամանակավորապես չի կարողանում մասնակցել արտելի աշխատանքներին իր անձնական աշխատանքով, նա պետք է ստանա արձակուրդ արտելի ընդհանուր ժողովից հատուկ թույլտվությամբ, այս կամ այն ժամկետով։

§ 38.

Աշխատանքի բաշխումը արտելի անդամների և նրանց ընտանիքների միջև վորը չի պահանջում հատուկ գիտելիքներ կամ ընդունակություն, պետք է կատարվի հավասարեցրման սկզբունքով։ Աշխատավոր ձեռքերի չատության դեպքում, կարող է սահմանել հերթ, աշխատանք տալու համար։ Աշխատանքների բաշխումը կատարվում է վարչության կամ տնտեսության վարիչի կողմից, վորին նշանակում է վարչությունը։

§ 39.

Արտելի անդամը պարտավոր է կատարել նրա վրա դրած բոլոր պարտականությունները, յեթե այդ աշխատանքը համապատասխանում է նրա ուժերին և ընդունակություններին։ Վարչության կարգադրության մասին կարող է բողոքել ընդհանուր ժողովին։ Սակայն մինչև նրա փոփոխումը մասնակցողը, պարտավոր է կատարել նրա վրա դրած բոլոր տեսակի աշխատանքները։

§ 40.

Արտելի անդամը և նրա ընտանիքը արտելի տնտեսության աշխատանքները կատարելիս, պարտավոր են յենթարկվել վարչության և բոլոր այն անձանց կարգադրություններին, վորոնք վարչության կողմից նշանակված են ղեկավարելու և հսկելու աշխատանքների վրա։

Աշխատանքների ակնբախ կերպով չկատարելու և առանց հարգելի պատճառներով բացակայելու դեպքում, ընդհա-

նուր ժողովը կարող է հանցավորին ազատել, կամ հեռացնել նրան արտելի կազմից։

§ 41.

Արտելի բոլոր անդամները և նրանց ընտանիքի անդամները, վորոնք իրենց աշխատանքը դնում են տնտեսության մեջ, ստանում են դրա համար վորոշ վարձատրություն, համաձայն կանոնների և գնահատության, վորը հաստատվել է ընդհանուր ժողովի կողմից։ Ըստ վորում ընդհանուր ժողովը կարող է վորոշել վոր վարձատրության մի մասը յենթակա լինի վճարման միայն դաշտային աշխատանքը վերջանալիս և տնտեսական տարվա հետևանքները պարզելիս։ Աշխատած ժամանակի քանակը, աշխատանքի տեսակը, հատանելի վարձատրության չափը, նույնպես կանխիկ տված գումարները գրվում են մասնակցողի հաշվեառման գրքույկում վոչ պակաս քան ամիսը յերկու անգամ։

§ 42.

Արտելի աշխատանքների ազատ ժամանակը, արտելը կարող է իր տրամադրության տակ գտնված կենդանի և մեռյալ ինվենտարը տրամադրել իր անդամներին ոգտագործելու համար, նաև այլ ձևերով ոժանդակելու նրանց, արտելի տնտեսությունից դուրս աշխատանքներ կատարելու։

Արտելին պատկանյալ գյուղատնտեսական մեքենաները և գործիքները կարելի յե տրամադրել նաև չրջակա ազգաբնակչությանը ոգտագործելու, յեթե այն արտելի տնտեսությանը վնաս չի հասցնում։ Նույն պայմաններով եվ կարելի յե կատարել բեղմնավորում ազգաբնակչության եզ անասունների, արտելի ցեղական ցուլերով։ Արտելի արտադրական ձեռնարկներում, յեթե նրանք կարող են վերամշակել ավելի մթերքներ, քան վոր ինքը տնտեսությունը ունի, այն դեպքում արտելը կարող է վերամշակել չրջակա ազգաբնակչության մթերքները։

Մեքենաների և գործիքների ոգտագործման, բեղմնավորման և ուրիշների մթերքները վերամշակելու համար, արտելը ստանում է իր ծախսերը ծածկելու համար վարձատրություն, վորը սահմանված է ընդհանուր ժողովի կողմից։

ԶՈՒՏ ՎԱՍՏԱԿԻ ՑԵՎ ՎՆԱՍՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ.

§ 43.

Արտելի տնտեսության բոլոր մթերքները անցնում են ամբողջովին արտելի տրամադրության տակ։ Ի հաշիվ հատանելի վարձատրության արտելի յուրաքանչյուր անդամը իրավունք ունի ստանալու ընդհանուր տնտեսության մթերքներից իր և իր ընտանիքի կարիքների համար վորոշ քանակություն։ Մթերքները բաց են թողնվում վարչության կողմից ամեն ամիս նշանակված գներով։ Տրվելիք մթերքները գրի են առնվում մասնակցողի գրքույկում ինքնարժեքով և հաշվում է այդ ի դիմաց աշխատավարձի կամ այլ գումարների, վորոնք հասնում են մասնակցողին, կամ նրա ընտանիքի անդամներին։

§ 44.

Արտելի գուտ վաստակը դուրս գալով 25%-ից վոչ պակաս պահեստի դրամագլխի ոգտին, դրվում է ընդհանուր ժողովի տրամադրության տակ, վորը ըստ իր հայեցողության կարող է գործադրել։

ա) Դրամագլուխներն կազմելու կամ այդպիսիները լրացնելու համար—համաձայն արտելի առաջադրած նպատակների։

1003
13647

բ) Իբրև լրացուցիչ վարձատրություն արտելի անդամներին կամ նրանց ընտանիքի անդամներին իրենց աշխատանքի համար։ §

գ) Կուլտուր-կրթական և այլ հանրօգուտ նպատակների համար։

§ 45

Զուտ վաստակի բաշխումը արտելի անդամների մեջ կատարվում է կամ

ա) ըստ աշխատանքի քանակի, հաշվելով թե իր և թե ընտանիքի անդամների,

բ) կամ ըստ ուտողների (едоки) քանակի կամ ըստ անդամների հողամասերի չափի և գ) այլ հիմունքներով։

Զուտ վաստակի բաշխման կարգը անդամների միջև սահմանում է ընդհանուր ժողովը, նախ քան դարձյալ դաշտային աշխատանքների սկսելը։

Արտելի անդամների աշխատանքի համար լրացուցիչ վարձատրությունը, վորը տրվում է զուտ վաստակից, կատարվում է ընդհանուր ժողովի վորոշմամբ կանխիկ դրամով և կամ թե այդպիսին տրվում է ի հաշիվ նրանց փայերի։

§ 46

Արտելի չրջանառության ընթացքում առաջացած վնասը ծածկվում է պահեստի դրամագլխից, բայց յեթե այդպիսին չծածկի, այդ դեպքում լրացվում է հիմնական դրամագլխից։ Սակայն ընդհանուր ժողովը կարող է, հիմնական դրամագլուխը թողնել անձեռնմխելի, պակասող գումարը բաժանել արտելի անդամների վրա ըստ իրենց պատասխանատվության չափի (հոդ. 17) և նշանակել ամեն մեկի համար վճարման ժամկետ։ Հասանելիք գումարը ժամկետին չմուծելու դեպքում, վարչությունը վճարողին պատկանող փայը

փոխանցում է ի հատուցումն պարտքի, իսկ յեթե վերջինս չի բավականացնում, պակասորդը դանձում է նրանից։ Մի անդամից հասանելիք գումարը, այսպիսին նրանից մեկ տարվա ընթացքում չդանձելու դեպքում ժամկետը նշանակման որից, նորից բաժանվում է մնացյալ անդամների վրա՝ նրանց պատասխանատվության գումարների սահմաններում։ Տարեկան վնասների այդպիսի վերադրումը չի դադարեցնում կամ պակասեցնում անդամների լրացուցիչ պատասխանատվությունը, արտելի լուծարքի ժամանակ, համաձայն 97 հոդվածի։

ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ

§ 47

Արտելի գործերի վարումը, դրվում է արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից, վարչության վրա։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

§ 48

Ընդհանուր ժողովը կատարում է՝

ա) Վարչության, վերստուգիչ հանձնաժողովի անդամների թեկնածուների ընտրությունը։

բ) Անդամի ընդունելությունը և հեռացումը։

գ) Արտելի անդամների հողամասերի սահմանումը, վորով վորոշվում է նրանց հողային իրավունքները, արտելից հեռանալիս կամ նրա լուծարքի դեպքում (հողային որենսգրքի 105 և 106 հոդվածների) դուրս յեկող անդամի հողի անջատման հարցի վորոշումը, և բոլոր այլ խնդիրների լուծումը, վորոնք կապված են հողագործման հետ (հողային որենսգրքի 51,110 և 111 հոդվածների)։

դ) Կանոնադրության լրացման կամ փոփոխման հարցերի լուծումը։

յե) Տնտեսական ծրագրերի, նախահաշիվների և հաշվետվությունների քննությունը և հաստատումը։

զ) Ոգուտի և վնասի բաշխումը, հատուկ դրամագլուխների հիմնադրումը, այդպիսիների նպատակների վորոշումը և ծախսերի ձևերի մշակումը։

է) Փայերի մուծման ժամկետի յերկրաձգումը։

ը) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի համար կանոնների և հրահանգների քննություն և հաստատումը։

թ) Արտելի տնտեսավարական աշխատանքների ձևերի, արտելային աշխատանքների կարգի, աշխատանքի պայմանների, նրա գնահատման և նույնանման հարցերի քննությունը ու հաստատումը։

ժ) Փոխառություն կնքելու հարցի վորոշումը։

ի) Անդամի կողմից արտելի ոգտագործման համար կամ վորպես սեփականություն տրվելիք գույքի ընդունման կարգի սահմանումը և այդ առթիվ արտելի և անդամի միջև կատարած համաձայնության հաստատումը։

թ) Արտելի և այլ ընկերությունների միջև առաջացած տարաձայնությունների վերացնելը և միությունների մեջ մտնելու հարցերի վորոշումը։

ի) Արտելի գործունեության դադարեցման հարցի վորոշումը և

ծ) Այն բոլոր հարցերի լուծումը, վորոնք վարչության իրավասությունից վեր է։

§ 49

Արտելի անդամների ընդհանուր ժողովները լինում են տարեկան, վորոնք հրավիրում է տարվա ընթացքում 2 անգամ, վորից մեկը գարնան, դաշտային աշխատանքները դեռ

յեվս չսկսած, յերկրորդը հաշվետու տարին վերջանալուց յերեք ամիս հետո, բացի դրանից հրավիրվում են հերթից դուրս ժողովներ՝ ընթացիկ գործերի լուծման համար։

§ 50

Տարեկան ընդհանուր ժողովները հրավիրվում են վարչության կողմից քննելու տարեկան հաշվետվությունը, նախահաշիվը և տնտեսական ծրագիրը, կատարելու՝ ընտրություններ ոգուտների և վնասների բաշխում և լուծելու ընթացիկ հարցեր։

§ 51

Ընդհանուր ժողովները, ընթացիք հարցերը լուծելու համար, հրավիրում են ըստ պահանջի, ըստ վարչության վորոշման, կամ վերստուգիչ հանձնաժողովի, և կամ թե վոչ պակաս արտելի հինգ անդամի պահանջմամբ։ Յեթե ընդհանուր ժողովը չի կայանում մեկ չաբաթվա ընթացքում, պահանջի հայտարարման որից, այն դեպքում այդպիսին հրավիրվում է վերստուգիչ հանձնաժողովի կողմից։

§ 52

Ընդհանուր ժողովի տեղի և որվա, նայելով քննության ենթակա հարցերի մասին, արտելի անդամները պետք է ծանուցվեն 3 որ առաջ։ Ընդհանուր ժողովի հայտարարությունը պետք է փակցված լինի, արտելի վարչության չենքում։

§ 53

Ընդհանուր ժողովը համարվում է կայացած, յեթե արտելի անդամներից վոչ պակաս $^3/_4$ մասը ներկա յե։ Իսկ յեթե ընդհանուր ժողովը հրավիրվում է լուծելու հատուկ դրամագլխին մուծվելիք վճարների հարցը, կանոնադրության

փոփոխումը, հողամասերի սահմանազծումը և փոփոխումն, անդամների հեռացումը, վնասների բաշխումը և արտելի գործունեության դադարեցումը, այն դեպքում այդ հարցերի լուծման համար անհրաժեշտ է, վոր ներկա լինեն արտելի անդամների ընդհանուր թվի $^3/_4$ մասը:

§ 54

Եթե ընդհանուր ժողովի նշանակման որը չեն հավաքվի 53-րդ հոդվածում նշած անդամների քանակության, այն դեպքում յերկրորդ անգամ նշանակվում է ժողով մի շաբաթից հետո: Այդ ընդհանուր ժողովը համարվում է կայացած անկախ ներկա յեղողների թվից:

Յերկրորդ ընդհանուր ժողովում լուծվում են այն հարցերը, վորոնք դրված են յեղել չկայացած ընդհանուր ժողովի որակարգում:

§ 55

Ընդհանուր ժողովում նախագահում է, ընդհանուր ժողովից ընտրված հատուկ անձնավորությունը: Վարչության անդամները չեն կարող ընտրվել ժողովի նախագահ: Ընդհանուր ժողովի արձանագրումը կատարում է ժողովի կողմից ընտրված քարտուղարը:

§ 56

Ընդհանուր ժողովում արտելի յուրաքանչյուր անդամը ունի միայն մեկ ձայնի իրավունք և այդպիսին ուրիշին չի թույլ տրվում տալ: Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները ընդհանուր ժողովում ունում են արտելի մյուս անդամների նման համահավասար իրավունքով, սակայն չեն ունում վճռական ձայնի իրավունքով հետևյալ հարցերի լուծմանը:

ա) Հաշվետվության հաստատմանը,

բ) Նրանց գործունեության գնահատման

գ) Սահմանված ժամկետից առաջ, նրանց պաշտոնից հեռացնելու և

յե) Նրանց դատական պատասխանատվության կանչելու դեպքում:

Վարչության հրավերով ընդհանուր ժողովին կարող են մասնակցել խորհրդակցական ձայնով նաև արտելի վոչ անդամները:

§ 57

Սույն կանոնադրության 53-րդ հոդվածում նշած հարցերի վորոշման համար պահանջվում է, վոր ներկա լինեն ընդհանուր ժողովին արտելի անդամների $^3/_4$ մասը: Մնացած գործերը և հարցերը վորոշվում են ձայների հասարակ մեծամասնությամբ: Ձայների հավասարացման դեպքում հարցը համարվում է չլուծված:

§ 58

Ընդհանուր ժողովում հարցերը վորոշվում են բաց քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունը ընդունվում է կամ ընդհանուր ժողովի վորոշմամբ, կամ, յեթե անդամներից վորևվե մեկից այդ մասին հայտարարություն արվի:

§ 59

Ընդհանուր ժողովի վորոշումները արձանագրվում են ընդհանուր ժողովի արձանագրությունների մատյանում և ստորագրվում ժողովի նախագահի, քարտուղարի, վարչության անդամների, ժողովի ներկա յեղողներից՝ արտելի լիազորությամբ արձանագրությունը ստորագրելու համար, վոչ պակաս յերեք անդամների կողմից:

Արձանագրությանը կցվում է ժողովին մասնակցող բոլոր անդամների ցուցակը յեթե նրանց անունները արձանա-

գրության մեջ չի հիշատակված։ Այդ ցուցակը հաստատում են նույն անձինք, վորոնք ստորագրում են ընդհանուր ժողովի արձանագրությունը։

§ 60

Ընդհանուր ժողովում յուրաքանչյուրը իրավունք ունի հայտարարելու իր հատուկ կարծիքը և պահանջելու, վորպեսզի գրվի արձանագրության մեջ, յեթե նա գտնում է ընդհանուր ժողովի վորոշումները որենքին կամ արտելի կանոնադրությանը հակառակ, կամ թե արտելի չահերին չհամաձայնեցրած։

§ 61

Ընդհանուր ժողովի վորոշումները ուժի մեջ են անցնում այդպիսիների ընդունվելուց, ի բաց առյալ այն վորոշումների, վորոնք վերաբերվում են կանոնադրության փոփոխումներին։ Վերջինները ուժի մեջ են անցնում տոմարագրվելուց հետո կանոնադրությունների տոմարագրման համար սահմանված կարգով։

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

§ 62

Վարչությունը հանդիսանում է արտելի գործադիրմարմինը, նա պարտավոր է արտելի բոլոր գործերը վարել, ինչպես մի բարեխիղճ ընկերոջ, ղեկավարվելով համաձայն սույն կանոնադրությամբ և ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոններով և հրահանգներով։ Վարչությունը հանդիսանում է վորպես իրավական մարմին, կառավարելու արտելի բոլոր գործերը, նույնպես միջամտություն ունենալու արտելի անդամների և կողմնակի անձանց ու հիմնարկությունների հետ ունեցած հարաբերություններին։

§ 63

Վարչությունը ընդհանուր ժողովի վորոշմամբ, կարող է հանձնարարել վարչության վորևիվե անդամին վարելու արտելի ընթացիք աշխատանքները։ Այդ անձավորությունը (староста) գործում է վարչության անմիջական ղեկավարությամբ, ունենալով վերջինից համապատասխան հավատարմագիր։

§ 64

Մասնավորապես վարչությունը հանձնարարում է՝

ա) Ընդհանուր տնտեսության և նրա առանձին ձեռնարկների ղեկավարումը, աշխատանքների բաշխումը, կառավարիչների, ավագի (староста) նշանակումը և այլն։

բ) Արտելին և նրա անդամներին անհրաժեշտ կայքի ընդունումը և պահպանումը, արտելի և նրա միայնակ անդամների արտադրած մթերքների վաճառահանումը։

գ) Արտելի սեփական և նրան հանձնած ունեցվածքի ցուցակագրումը։

դ) Դրամի ընդունումը, վճարումը և պահպանելը, նրա մթերքների և նյութեղենի ընդունելը, բաց թողնելը և պահպանելը։

յե) Պայմանագրերի կնքումը։

զ) Համաձայն ընդհանուր ժողովի վորոշման, փոխառության կնքումը, պարտավորությունների և փոխատվությունները տալը, փոխատվությունների ստացումը և արտելի անդամներից ավանդների ընդունումը։

է) Արտելի ոգտին բռնագանձում կատարելը դատարաններում, դատարաններում արտելի գործերով վորպես հայցվոր և պատասխանատու հանդիսանալը։

ը) Հավատարմագրեր տալը։

թ) Արտելի անդամների փայի, մուտքի վճարների և լրացուցիչ գումարների չափի վորոշումը:

ժ) Արտելի գործավարության, դրքերի և հաշիվների վարումը:

ի) Տարեկան հաշվետվության, նախահաշվի, տնտեսավարական ծրագրի կազմելը և այլ գործերի կատարումը, վորոնք անհրաժեշտ են ընդհանուր ժողովին զեկուցելու համար:

լ) Ընդհանուր ժողովի հրավիրումը:

խ) Արտելի աշխատանքների բոլոր ճյուղերի վերաբերյալ կանոնների և հրահանգների կազմելը, և այդպիսինը ընդհանուր ժողովին ներկայացնելը, ի քննություն:

ծ) Արտելի ծառայողների և բանվորների ընդունելությունը և հեռացումը և

կ) Այլ պարտականությունների կատարումը, վորոնք բղխում են կանոնադրությունից և ընդհանուր ժողովի կողմից ընդունված՝ վորոշումներից:

§ 65·

Վարչության կազմը բաղկացած է լինում վոչ պակաս 3 անդամից, վորոնց ընդհանուր ժողովը ընտրում է արտելի անդամներից՝ մեկ տարի ժամանակով:

Վարչության անդամներին կարիք յեղած դեպքում փոխարինելու համար ընդհանուր ժողովը նույնքան ժամանակով ընտրում է մեկ կամ յերկու թեկնածու:

§ 66·

Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող մտնել միաժամանակ այնպիսի անձինք, վորոնց յերկրորդ աստիճանի ազգակցական կապեր ունեն միմիայնց

հետ (ծնողներ, ամուսիններ, յերեխաներ, թոռներ, յեղբայր և քույր):

§ 67·

Ընդհանուր ժողովից է կախված վարչության նախագահի ընտրությունը, կամ թե իրավունք է վերապահվում վարչությանը իր կազմից նախագահ ընտրելու: Վարչության նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինելու համար ընտրվում է նաև տեղակալ:

§ 68·

Վարչության նիստերը հրավիրվում են նախագահի կողմից, վոչ պակաս յերկու շաբաթը մեկ անգամ, նիստերի ժամանակի (տեղի և ժամի) մասին վարչության սենյակում պետք է փակցրած լինի հայտարարություն:

§ 69·

Վարչության նիստերը համարվում են կայացած, յերբ ներկա են լինում վարչության յերեք անդամը, վորոնց թվում նախագահը կամ փոխնախագահը:

§ 70·

Վարչության բոլոր գործերը լուծվում են ձայների հասարակ մեծամասնությամբ: Ձայների անհավասարության դեպքում, նույնպես և լուրջ տարաձայնությունների դեպքում, վիճելի հարցը փոխադրվում է ընդհանուր ժողովի քննությանը և լուծմանը:

§ 71·

Վարչության վորոշումները արձանագրվում են արձանագրությունների մատյանում և ստորագրվում ներկա գտնվող վարչության բոլոր անդամների կողմից:

§ 72·

Վարչության աշխատակիցների ներքին կարգապահությունը և վարչության յուրաքանչյուր անդամի պարտականությունները սահմանվում են, ընդհանուր ժողովի կողմից հաստատված հրահանգներով։

§ 73·

Հավատարմագրերը, պարտավորագրերը, պայմանագրերը, չեկերը, մուրհակները դրամական այլ փաստաթղթերը և պարտավորագրերը, վորոնք ստորագրվում են վարչության կողմից պետք է ունենա անպայման վարչության կամ փոխնախագահի, նաև վարչության մեկ այլ անդամի ստորագրությունը։

§ 74·

Յեթե հաշվետվությունը հանձնարարված կլինի կազմելու վարչության վորևե անդամին, այն դեպքում այդ պարտականությունները չպետք է միացվեն գանձապահի պարտականություններին։ Բացի այդ արտելի գանձապահը իրավունք չունի կառավարել վորևե այլ դրամարկղ։

§ 75·

Վարչության անդամի հիվանդության, ժամանակավոր բացակայության, կամ նախ քան ընդհանուր ժողովի գումարվելը և հեռացվածի տեղը գրավում է շատ ձայն ստացած թեկնածուն։

§ 76·

Ընդհանուր ժողովը, վարչության անդամներին իրենց կատարած աշխատանքների համար կարող է նշանակել միանվագ կամ մշտական աշխատավարձ։

§ 77·

Վարչության վորոշումների դեմ կարելի յե բողոքել վերստուգիչ հանձնաժողովին, կամ ընդհանուր ժողովին։

§ 78·

Վարչության անդամը ժամանակից առաջ կարող է հեռացվել պաշտոնից ընդհանուր ժողովի վորոշմամբ։

§ 79·

Վարչության կողմից արտելին հասցրած վնասները, իրենց պարտականությունների խախտման հետևանքով, վարչության անդամները համահավասար պատասխանատու յեն իրենց ամբողջ ունեցվածքով։ Այն գործերով, վորոնք ընդհանուր ժողովի կողմից հանձնարարված են յեղել հատկապես վարչության մեկ անդամին, և հետագայում խախտելով կանոնները արտելին վնաս է հասցրել, վարչության մնացած անդամները պատասխանատվություն չեն կրում, յեթե նրանք հնարավորություն չեն ունեցել ժամանակին կասեցնելու վնասները։

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ·

§ 80·

Վերստուգիչ հանձնաժողովին հանձնարարվում է՝

ա) Գույքի, դրամարկղի, հաշիվների, դրքերի, փաստաթղթերի և արտելի բոլոր գործունեության վերստուգումը·

բ) Տարեկան հաշվետվության նախահաշվի, տնտեսական ծրագրի, և վերաստուգման աշխատանքների առթիվ՝ ընդհանուր ժողովին իր յեզրակացությունը ներկայացնելու խնդիրները·

գ) Վարչության վրա դրված բողոքների քննությունը։

§ 81·

Վերստուգիչ Հանձնաժողովի զեկուցումները և յեզրակացությունները, նախ քան ընդհանուր ժողովին ներկայացնելը, հայտնվում է վարչությանը՝ տալու համար այդ առթիվ հարկ յեղած բացատրությունը։

§ 82·

Վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած է լինում վոչ պակաս 3 անդամից, վորոնց ընտրում է արտելի անդամների ընդհանուր ժողովը 1 տարի ժամանակով, ըստ վորում վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող ընտրվել վարչության անդամները և արտելի ծառայողները։

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին, կարիք յեղած դեպքում փոխարինելու համար, ընդհանուր ժողովը նույնքան ժամանակ ընտրում է նաև մեկ կամ յերկու թեկնածուներ։

§ 83·

Վերստուգիչ հանձնաժողովը գումարվում է՝ ընդհանուր ժողովի ցուցմունքներով և այլ որերին ու կարիք յեղած դեպքում նաև իր հայացողությամբ։

§ 84·

Վարչության վրա գրված բողոքների, վերստուգման ժամանակ հայտնաբերած թերությունների և սխալների առթիվ վերստուգիչ հանձնաժողովը տալիս է ցուցմունքներ։ Այն դեպքում յերբ հայտնաբերում է խոշոր անկանոնություններ և չարաշահություններ արտելի գործերում, վերստուգիչ հանձնաժողովը հրավիրում է անդամների ընդհանուր ժողով սահմանած ժամանակից առաջ։

§ 85·

Վերստուգիչ հանձնաժողովի դեմ բողոքներ տրվում են անդամների ընդհանուր ժողովին, սակայն վոչ այլ կերպ, քան վերստուգիչ հանձնաժողովի միջոցով, վորը պարտավոր է այդպիսին ներկայացնել անդամների առաջիկա ընդհանուր ժողովին։

§ 86·

Վերստուգիչ հանձնաժողովի գործունեության նկատմամբ կիրառվում է նաև սույն կանոնադրության 66, 67, 69, 72, 76, և 78 հոդվածները։

ՀԱՇՎԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

§ 87·

Արտելը իր տնտեսավարական աշխատանքները ճիշտ հաշվեառման համար, ունենում է հաշվետարական դրքեր, ուր գրանցվում է՝

ա) Արտելի ամբողջ շրջանառության ընդհանուր մուտքը և յելքը։

բ) Արտելի ամբողջ ունեցվածքի հաշիվը։

գ) Արտելի և ծառայողների, կողմնակի անձանց, նաև հիմնարկությունների հետ ունեցած հաշիվները—առանձին-առանձին։

դ) Արտելի յուրաքանչյուր անդամի փայավճարների և այլ հաշվարկների հաշիվը։

§ 88·

Արտելի հաշվետու տարին սկսվում է 1-ն . . . . . և վերջանում է . . . . . 1-ին։ Մինչև այդ, առաջին հաշվետու տարին հաշվում է վերջին թիվը հաշված արտելի գործունեության որից։

§ 89·

Տարեկան հաշվետվությունը, իր մեջ պետք է պարունակի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, մասնավորապես՝ միջոցների (հաշվեկշռի), դրամագլխի շրջանառության, ունեցվածքի, անդամների և մասնավոր անձանց ու հիմնարկների հետ կատարած հաշվարկման, տնտեսության ամեն մի ճյուղի, ոգուտի և վնասի հաշվառման, մուտքի, ելքի և մնացորդի մասին առանձին-առանձին, նույնպես և անդամների թվի փոփոխումների ու պարտավորության գումարների նշանառումները։

§ 90·

Տարեկան հաշվետվությունը պետք է կազմված լինի և ստուգված վարչության կողմից, վոչ ուշ քան յերկու ամսվա ժամանակաընթացքում, հաշվետու տարին վերջանալուց հետո։

Յեթե նշանած ժամանակաընթացքում Վարչության կողմից կազմված չլինի հաշվետվությունը, այն դեպքում Վերըստուգիչ Հանձնաժողովը պարտավոր է այդպիսին կազմելու համար հանձնարարել ուրիշ անձանց ի հաշիվ վարչության։ Մինչ ընդհանուր ժողովին ներկայացնելը, հաշվետվությունը գրքերով և փաստաթղթերով ստուգում է վերըստուգիչ հանձնաժողովը, վորի մասին նա համապատասխան մակագրություն է անում և վավերացնում է իր անդամների ստորագրություններով։

Հաշվետվությունը ընդհանուր ժողովին ներկայացվում է, Վերաստուգիչ Հանձնաժողովի յեզրակացությամբ։

ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՐԵՑՈՒՄԸ

§ 91·

Արտելը լուծարքի յե յենթարկվում՝

ա) Արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ՝

բ) Դատարանի վորոշմամբ յերբ հայտնաբերվում է վոր արտելը միջոցներից զուրկ է։

գ) Հայդյուղկոոպի վորոշմամբ, յերբ արտելը նշած նպատակներից չեղումներ է կատարում կամ գործում է ի վնաս պետական շահերի։

դ) Այն դեպքում յերբ անդամների թիվը 5-ից պակաս կլինի։

Վերջին կամ այլ դեպքերում յերբ ընդհանուր ժողով հնարավոր չի ունենում գումարել՝ լուծարքի յենթարկելու վորոշում կայացնելու համար, Վարչությունը կամ արտելի մնացած անդամները պարտավոր են անմիջապես այդ մասին հայտնել, Հայաստանի Գյուղատնտեսական Կոոպերատիվների Միությանը (Հայդյուղկոոպին) և ստանալով վերջինից լիազորություն սկսել լուծարքի աշխատանքները։

§ 92·

Արտելի լուծարքի կարգը վորոշվում է ընդհանուր ժողովի հատուկ վորոշմամբ։

§ 93·

Ընդհանուր ժողովի վորոշումը, լուծարքի մասին, հայտնվում է այն հիմնարկությանը, վորտեղ տոմարագրված է յեղել արտելի կանոնադրությունը, և այդ մասին հայտարարվում է տեղական պաշտոնական մամուլում։ Լուծարքի ժամկետը մի տարուց ավելի չպետք է լինի՝ հաշված լուծարքի մասին կայացած վորոշման որը։

§ 94·

Արտելի լուծարքը կատարում են Վարչության անդամները, յեթե ընդհանուր ժողովը այդ աշխատանքը հանձնա-

բաշած չի լինում այլ անձանց։ Լուծարք անողների թիվը 3 հոգուց պակաս չպիտի լինի։

§ 95·

Լուծարք անողները յենթարկվում են Վարչության անդամների համար սահմանած բոլոր կանոններին, և նույն հիմունքներով էլ կրում են պատասխանատվություն՝ արտելին հասցրած վնասների համար. նույնպես յենթակա յեն Վերաստուգիչ Հանձնաժողովի հսկողությանը։

§ 96·

Լուծարք անողները կատարում են արտելի պարտականությունները—ստանում և գանձում են նրա պահանջմամբ, ու վաճառում արտելի պատկանյալ գույքը։ Լուծարք անողները նոր պարտավորություններ կարող են անել այն դեպքում միայն, յեթե այդ առթիվ ընդհանուր ժողովը ավել է իրավունք։

§ 97·

Յեթե արտելի ունեցվածքը չի բավականացնի նրա պարտքերը ծածկելու համար, այն դեպքում կազմվում է հաշիվ, թե արտելի յուրաքանչյուր անդամ իրեն պատասխանատվության սահմանում (հոդ. 17-րդ) ինչ գումար պետք է վճարե։ Այս ձևի պարտքի վճարումը տարածվում է նաև հեռացված անդամների վրա (հոդ. 19-րդ)։ Գումարները կանոնավոր չվճարման դեպքում, այդպիսին գանձվում է դատական կարգով։

§ 98·

Արտելի մասնակցողների վայերը կարող են վերադարձվել տերերին մինչև, վոր չծածկվեն արտելի պարտքերը։ Համենայն դեպս վոչ ուշ քան մի տարուց հետո, հաշվելով

լուծարքի մասին հայտարարություն տված որը։ Այն գումարները, վորոնք անհրաժեշտ են վճարելու արտելի վիճելի պարտքերի, և ժակեռները դեռ ևս չլրացած պարտքերի հաստատման համար, լուծարք անողների կողմից վորոշ մաս են հանվում։

Սույն հոդվածի խախտման համար լուծարք անողները համահավասար պատասխանատու յեն, ինչպես արտելի առաջ, նույնպես և նրա պարտատերերի հանդեպ։ Նույնպիսի պատասխանատվություն և դրվում նաև Վերաստուգիչ Հանձնաժողովի անդամների վրա, յեթե նրանք հայտնաբերելով խախտումը, այդ մասին չեն հայտնի դրավոր ձևով։

§ 99·

Բոլոր հողամասերը, վորոնք արտելի ոգտագործման են անցել իրենց անդամներից, նույնպես արտելի աշխատանքային ոգտագործման համար հատկացրված հողերը, բաշխվում են արտելի անդամների միջև հարաբերական չափով, ըստ նրանց հողերի բաժինների (հոդ. սրենսդրքի 105, 106 և 111 հոդվածները)։ Այն հողամասերը, վորոնք մնում են պետության ամիջական տրամադրության տակ, հանձնվում են հողային մարմիններին։

§ 100·

Լուծարքային ժողովը վորոշում է հողերի հետագա ոգտագործման կարգը (համայնական, շրջանային, և այլն), վորը յենթակա չի բաշխման արտելի անդամների միջև նրանց աշխատանքային ոգտագործության համար (հողային սրենսդիրք 51 և 111 հոդվածը)։

§ 101·

Լուծարքը վերջացնելուց հետո, լուծարք անողները կազմում են իրենց գործունեության մասին հաշվետվություն,

փոքը Վերատուչիչ Հանձնաժողովի յեղրակացութեամբ, ներկայացվում են ընդհանուր ժողովին ի հաստատութիւն: Հաշվետվութիւնը հաստատվելուց հետո լուծարքի, վերջանալու մասին հայտնվում և Հայդյուղկոոպին, ուր և ուղարկվում և արտելի բոլոր գրքերը և փաստաթղթերը:

Լուծարքը վերջանալու մասին հայտնվում և տեղական պաշտոնական մամուլում:

102·

Արտելի պարտքը վճարելուց և փայերը վերադարձնելուց հետո, լուծարք անողները արտելի մնացորդ դույքը հատկացնում են կոոպերատիվ և այլ հասարակական կարիքներին համար՝ լուծարքային ընդհանուր ժողովի ցուցմունքով:

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝

ՀԱԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
*С.С.Р.А
7/II 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0193308

30.578

ՀԱԼՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրախ. 201բ. Պատվ. 3262 Տիրաժ 500